ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սոցիալիստական իրավունքը հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների, դրանց դրսևորումների՝ հասարակական շահերի ու կարիքների կարգավորիչ։ Կարգավորումը իրավունքի հիմնական հատկություններից է, նրա սոցիալական կոչումը։ Այդ պատճառով իրավական կարգավորումը, առարկան ու բովանդակությունը իրավացիորեն համարվում են իրավունքի տեսության կարևորագույն պրոբլեմներից մեկը։ Դրա ուսումնասիրությունը ունի գիտական և գործնական նշանակություն։ Դրանով իսկ հնարավորություն է ընձեռվում պարզաբանելու ոչ միայն հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ողջ պրոցեսը և երևան հանելու սպեցիֆիկ այն մեթոդներն ու ձևերը, որոնց օգնությամբ իրավունքը ներգործում է հասարակական հարաբերությունների վրա, այլև հետազոտելու բոլոր այն հարցերը, որոնք կապված են իրավական ձևերի կատարելագործման և իրավունքի համակարգի կառուցման հետ։

Նախ՝ ինչ պետք է հասկանալ իրավական կարգավորման տակ։ «Կարգավորել», «կարգավորում» նշանակում է կարգի բերել, ինչ-որ բան ենթարկել ընդհանուր կանոնի, որոշակի սահմանների մեջ դնել, սահմանել ռեժիմ, կարգավորել գործերը, լուծել վեճերը և այլն։ Այդ հասկացությունը լայնորեն օգտագործվում է արտադրության բնագավառում։

Իրավունքը նույնպես յուրատեսակ կարգավորիչ է, որի օգնությամբ մարդիկ կարգավորում են իրենց գործերը, կենսական հարցերը։ Իրավունքը ոչինչ չի ստեղծում, այլ միայն ճանաչում, վավերացնում, ամրապնդում և պաշտպանում է որոշակի հասարակական կարգերն ու հարաբերությունները։

«Իրավական կարգավորման առարկա» գիտական հասկացությունը առաջ է քաշվել 1938—1941 թթ. սովետական իրավունքի համակարգի մասին տեղի ունեցած բանավեճի ժամանակ։ Այն առաջ է քաշվել որպես իրավական նորմերի խմբավորման, դասակարգման և իրավունքի համակարգ կառուցելու հիմնական սկզբունք։

Մինչև վերջին տարիներս իրավագետների մեծամասնությունը իրավական կարգավորման առարկայի տակ հասկանում էր մարդկանց վտրքը, վարմունքը, գործողությունը[1]*։ Դա, ըստ էության, նոր տեսակետ չէ և, պետք է ենթադրել, մշակվել է դատաքննչական օրգանների գործունեության հիմքի վրա։ Ինչպես հայտնի է, դատաքննչական օրգանները իրենց անմիջական գործունեության ընթացքում գործ ունեն* իրավախախտումների *հետ։*

---

[1] *«Իրավական կարգավորման առարկայի» մասին իրավաբանական գրականության մեջ արտահայտված կարծիքները մանրամասն քննարկվում են Վ. Բ. Շեյնդլինի աշխատության մեջ։ Տե՛ս* Б. В. Шейндлин, Сущность советского права, Л., 1959, стр. 104—117.

Քննչական օրգանները և քրեական դատարանը քննության են առնում քրեական իրավախախտումներ, իսկ քաղաքացիական գործերով դատարանը՝ քննում և լուծում է ունեցվածքային, ընտանեկան և քաղաքացիական այլ բնույթի վեճեր։ Դատաքննչական օրգանները իրենց առօրյա գործունեության ընթացքում գործ ունեն ոչ միայն այս կամ այն վարքի կամ գործողության, այլ շատ բարդ հասարակական հարաբերությունների հետ։ «Հասարակական հարաբերություն» հասկացությունը, արդարացի նշում է Ս. Բրատուսը, ավելի տարողունակ է, քան «վարք», «գործողություն» հասկացությունը[2]։

Սակայն, ինչպես հայտնի է, գոյություն ունեն տարբեր հասարակական հարաբերություններ։ Հարց է ծագում, ինչպիսի՞ք են այն հասարակական հարաբերությունները, որոնք ենթակա են իրավական կարգավորման։ Այդ մասին կան տարբեր կարծիքներ։ Իրավական կարգավորման առարկայի տակ ոմանք հասկանում են հատուկ հասարակական հարաբերություններ, մյուսները՝ էական հասարակական հարաբերություններ։ Կա մի երրորդ տեսակետ, ըստ որի իրավունքը կարգավորում են կամային հասարակական հարաբերությունները։ Այդ վերջին տեսակետը, ըստ երևույթին, ունի ավելի շատ կողմնակիցներ։ Այն ամենայն մանրամասնությամբ քննված է Ս. Ալեքսեևի գրքում[3]։

Հեղինակը իրավացի է, գտնելով, որ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը ծագում է դասակարգային հասարակության տնտեսական կառուցվածքից։ Այդ վերջինը որոշում է և իրավական կարգավորման սահմանները։ Իրավական կարգավորման առարկայի տակ Ս. Ալեքսեևը հասկանում է այն հասարակական հարաբերությունները, որոնք՝ ա) այսպես թե այնպես կրում են կամային բնույթ, բ) կարող են ենթարկվել արտաքին հսկողության, իրավական միջոցների ներգործության[4]։

Ըստ Ս. Ալեքսեևի, իրավական կարգավորման ենթակա չեն. ա) հասարակական այն հարաբերությունները, որոնց բովանդակության մեջ օբյեկտիվ տարրերը խաղում են որոշիչ դեր։ Այդ կարգի հարաբերությունները կարող են լինել իրավական կարգավորման առարկա իրենց «կամային կողմի» միջոցով։ բ) Հասարակական այն հարաբերությունները, որոնք առաջ են գալիս սիրո, բարեկամության և ընկերության բնագավառներում[5]։

Այսպիսով, իրավական կարգավորմամբ «ընդգրկվում են միայն այն հասարակական հարաբերությունները, որոնք տվյալ սոցիալ-տնտեսական պայմաններում օբյեկտիվորեն պահանջում են իրավական կարգավորում»[6]։ Բայց ասվածը համոզիչ չէ, որովհետև ինչպես հասարակության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, հարևան պետությունների միջև կարող են ծագել հասարակական հարաբերություններ, որոնք օբյեկտիվորեն պահանջում են իրավական կարգավորում, սակայն այդ բանը տեղի չի ունենում։ Օրինակ, բուրժուական հասարակության արտադրողական ուժերը վաղուց

---

2 Տե՛ս «Общая теория советского права», под ред. С. Н. Братуся и И. С. Самощенко, М., 1966, стр. 16.

3 Տե՛ս С. С. Алексеев, Механизм правового регулирования, М., 1966, стр. 5—48.

4 Նույն տեղում, էջ 53։

5 Նույն տեղում, էջ 54։

6 Նույն տեղում, էջ 55։

օբյեկտիվորեն պահանջում են ճանաչել նրանց հասարակական բնույթը, այսինքն՝ յուրացման ձևը հարմարեցնել արտադրության բնույթի հետ։ Սակայն բուրժուական պետությունը ոչ միայն չի իրականացնում հասարակական զարգացման այդ օբյեկտիվ պահանջը, այլև ընդհակառակը, ամեն կերպ պաշտպանում է սեփականության բուրժուական հարաբերությունները։

Սոցիալիստական հասարակության մեջ նույնպես կարող են լինել հասարակական հարաբերություններ, որոնք օբյեկտիվորեն պահանջում են խիստ իրավական կարգավորում, սակայն ինչ-որ հանգամանքների աղդեցության ներքո այդ բանը տեղի չի ունենում։

Այսպես ուրեմն, բավական չէ ասել, որ տվյալ հասարակական հարաբերությունները օբյեկտիվորեն պահանջում են իրավական կարգավորում։ Բացի դրանից անհրաժեշտ է, որ պետությունը շահագրգռված լինի այդ բանում, պետք է հրատարակվեն համապատասխան օրենսդրական ակտեր։ Եթե մենք աչքաթող աննենք տվյալ հասարակության մեջ գործող օրենքները, ապա մեր եզրակացությունները իրավական կարգավորման առարկայի մասին լավագույն դեպքում կլինեն գուշակումներ, կռահումներ։

Եվ իրոք, գործող օրենքները կարող են կարգավորել (և կարգավորում են) միայն հասարակական այն հարաբերությունները, որոնց արտահայտությունը հանդիսանում են իրենք։ Եթե տվյալ հասարակական հարաբերությունը իրավունքի կողմից չի ճանաչվել, վավերացման չի ենթարկվել, ապա պարզ է, որ այն չի կարող ենթարկվել և իրավական կարգավորման։ Այդպիսին է օրինականության արմատական պահանջներից մեկը։

Իրավունքի կիրառումը տրամաբանական օպերացիա է, որի ընթացքում օրենքի (դրա հոդվածի) գործողությունը տարածում են տվյալ կոնկրետ հասարակական հարաբերության վրա։ Եթե տվյալ մարդկային արարքը, հասարակական հարաբերությունը չի ընկնում օրենքի որևէ հոդվածի տակ, հետևաբար նա զուրկ է իրավական նշանակությունից, չի կարող լինել իրավական կարգավորման առարկա։

Օրենքի անշեղ կիրառումը ապահովելու համար անհրաժեշտ է.

Առաջին. լիակատար պատկերացում ունենալ կիրառվող օրենքի բովանդակության մասին։ Եթե մեզ հայտնի չէ, թե հասարակական կյանքի որ կողմերն են արձանագրված տվյալ օրենքի մեջ, ապա մենք ի վիճակի չենք լինի որոշել հասարակական այն հարաբերությունները, որոնց նկատմամբ այդ օրենքը պետք է կիրառել։ Մի խոսքով, օրենքը հմտորեն կիրառելու համար պետք է լիակատար պատկերացում ունենալ նրա բովանդակության մասին։

Երկրորդ. օրենքի ճիշտ կիրառումը ապահովելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ հասարակական այն հարաբերությունների բովանդակության, նրանց բնորոշ գծերի մասին, որոնց նկատմամբ պետք է կիրառել տվյալ օրենքը։ Իսկ այդ բանին կարելի է հասնել նրանց մանրազնին քննության շնորհիվ։ Պատահական չէ, որ տվյալ գործի մանրազնին քննությունը համարվում է օրենքի անշեղ կիրառման երաշխիքներից մեկը։ Պարզ ասած՝ օրենքի ճիշտ կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի նրա բովանդակությունը լիովին համընկնի հասարակական այն հարաբերության բովանդակության հետ, որի նկատմամբ կիրառվում է այն։ Այդ համընկնումը օրենքի ճիշտ կիրառման օբյեկտիվ հիմքն է։ Եթե այն բացակայում է, նշանակում է տվյալ հասարակական հարաբերությունը, տվյալ արարքը չունի իրա-

վական նշանակություն, դրա նկատմամբ հայցված քննությունը անհապաղ պետք է դադարեցնել, իսկ գործը վարույթով կարճել։

Երբեք չպետք է շփոթել իրավունքի ծագման խնդիրը նրա հետադարձ ներգործման հարցի հետ։ Իրավունքը պայմանավորված է դասակարգային հասարակության գոյության նյութական պայմաններով, այն արտացոլում է մարդկանց փաստական, տնտեսական հարաբերությունները և դառնում է այդ հարաբերությունների զարգացման ձև։ Բայց նկատի ունենալով, որ իրավունքը իր մեջ արտացոլում է ոչ բոլոր, այլ միայն այն հասարակական հարաբերությունները, որ պետությունը գտնում է անհրաժեշտ, հետևաբար իրավական կարգավորման ենթակա հարաբերությունները իմանալու համար պետք է դիմել հենց իրավունքին։

Մյուս հարցը, որի պարզաբանումը սկզբունքային նշանակություն ունի, հետևյալն է. ենթարկվում ե՞ն, արդյոք, նյութական արտադրական հարաբերությունները իրավական կարգավորման։

Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ արտադրական հարաբերությունները, լինելով օբյեկտիվ, անմիջականորեն չեն ենթարկվում իրավական կարգավորմանն։ Իրավունքը, նրանց կարծիքով, ներգործում է այդ հարաբերությունների վրա միայն կամային հասարակական հարաբերությունների միջոցով[7]։ Մեր համողմամբ, այս պատասխանը թերի է և պատկերացում չի տալիս արտադրական հարաբերությունների և իրավական ձևերի միջև եղած փոխհարաբերության մասին։

Առաջ քաշված հարցին որոշակի պատասխան տալու համար անհրաժեշտ է պարզաբանել մեկ այլ հարց, այն է՝ իրավունքը արտահայտում է, արդյոք, արտադրական տնտեսական հարաբերություններ։

Որ իրավունքը իր գոյությամբ պարտական է տվյալ հասարակության նյութական արտադրական հարաբերություններին, որ նա արտացոլում է դասակարգային այն շահերը, որոնք բխում են այդ հարաբերություններից, հայտնի թե որևէ սովետական իրավագետի մեջ կարող է կասկած հարուցել։ Դա ընդհանուր ճանաչում գտած դրույթ է։ Իրավունքը տվյալ հասարակության վերնաշենքի մասերից է։ Այն պայմանավորված է այդ հասարակության տնտեսական կառուցվածքով։ Բայց ծագելով հասարակության տնտեսական բազիսից, իրավունքը վերնաշենքի, մյուս մասերի նման, ձեռք է բերում հարաբերական անկախություն և ակտիվորեն ներգործում է հասարակության տնտեսական զարգացման վրա։ Իրավունքը, ինչպես և պետությունը, կարող է նպաստել հասարակության տնտեսական զարգացմանը, առաջ մղել այն, արագացնել նրա շարժումը և հակառակը՝ կարող է որոշ ուղղությամբ արդելակել տնտեսական զարգացումը և տալ այլ ուղղություն։

«Հասարակական ուժերը, բնության ուժերի նման,—գրում է Էնգելսը,—կուրորեն, բռնի ու քայքայիչ կերպով են գործում, քանի դեռ մենք չենք ճանաչել և հաշվի չենք առնում դրանք։ Բայց հենց որ մենք ճանաչեցինք այդ ուժերը, հասկացանք նրանց գործողությունը, ուղղությունն ու ազդեցությունը, այն ժամանակ միայն մեզնից է կախված նրանց ավելի ու ավելի մեր կամքին ենթարկել և նրանց օգնությամբ մեր նպատակին հասնել»[8]։

---

7 Տե՛ս Ս. Ալեքսեև, նշվ. աշխ., էջ 64։

8 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Ե., 1962, էջ 376։

Սոցիալիստական իրավունքը սոցիալիստական հասարակության տնտեսական օրենքների օգտագործման կարևորագույն միջոցներից է։ Այն մեծ դեր է խաղացել կապիտալիստական սեփականատիրական հարաբերությունները սահմանափակելու և վերացնելու գործում։

Հատկապես մեծ էր քաղաքացիական օրենսգրքի դերը անցման շրջանի տնտեսական հարաբերությունները կարգավորելու գործում։

Ըստ Էնգելսի՝ հասարակության զարգացման շատ ցածր աստիճանի վրա պահանջ է առաջ գալիս «ընդհանուր կանոնի միջոցով ընդգրկելու մթերքների արտադրության, բաշխման և փոխանակության օրեցօր կրկնվող գործողությունները, հոգալու այն մասին, որ անհատը ենթարկվի արտադրության և փոխանակության ընդհանուր պայմաններին։ Այդ կանոնը, որ սկզբում արտահայտվում է սովորույթի մեջ, այնուհետև դառնում է օրենք։ Օրենքի հետ միասին անհրաժեշտորեն առաջ են գալիս օրգաններ, որոնց հանձնարարվում է նրանց պահպանումը,— հանրային իշխանություն, պետություն»[9]։

Սոցիալիզմի օրոք օրենքը այն հիմնական միջոցն է, որի օգնությամբ հասարակությունը, հանձինս պետության, ընդգրկում է մթերքների արտադրությունը, բաշխումը և փոխանակումը և հոգ է տանում այն մասին, որպեսզի սոցիալիստական հասարակության անդամները ենթարկվեն արտադրության ու փոխանակության ընդհանուր պայմաններին։

Իսկ ի՞նչ է նշանակում օրենքների (իրավական նորմերի) միջոցով ընդգրկել նյութական բարիքների արտադրությունը, բաշխումն ու փոխանակումը։ Դա նշանակում է, որ պետությունը իր կողմից սահմանված իրավական նորմերի միջոցով հասարակական կյանքի այդ կողմերը վերցնում է իր հսկողության տակ, կազմակերպում ու ղեկավարում է արտադրությունը ինչպես առանձին ձեռնարկություններում, այնպես էլ ամբողջ ժողովրդական տնտեսության մասշտաբով, պլանավորում է տնտեսության զարգացումը, տնտեսության զանազան ճյուղերի, տարբեր արտադրությունների միջև սահմանում համաչափություն, բաշխում է նյութական, աշխատանքային, ֆինանսական միջոցները ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների միջև, որոշում է արտադրության զարգացման տեմպերը, աշխատանքի արտադրողականության աճը, տեխնիկական առաջադիմության ուղղությունը, արտադրության ծավալն ու կառուցվածքը, պետական ու կոոպերատիվ առևտրի ապրանքների գները, աշխատավարձի մակարդակը և այլն։ Պետությունը ղեկավարում է կոլտնտեսությունների տնտեսական կյանքը, միջոցներ է ձեռնարկում քաղաքի ու գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև տնտեսական կապերն ընդարձակելու ուղղությամբ։ Պետությունը ապահովում է արդյունաբերական և պարենային ապրանքների արտադրությունը և ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացումը, իրականացնում է միջոցառումներ ժողովրդական տնտեսության համար բարձրորակ կադրերի պատրաստման ուղղությամբ։ Այդ բոլոր աշխատանքները սոցիալիստական պետությունը իրականացնում է օրենքների և այլ նորմատիվ ակտերի միջոցով։ Վարչական իրավունքի նորմերի օգնությամբ պետությունը սահմանում է օրգանների այն համակարգը (արտադրամասի պետ, արտադրական ձեռնարկության դիրեկտոր, իրենց պլանային, արտադրական, տեխնիկական և այլ բյուրոներով, բաժիններով), որը

9 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Ե., 1950, էջ 766։

անմիջապես կառավարում է արտադրության պրոցեսը և լուծում այն բոլոր հարցերը, որոնք անհրաժեշտաբար ծագում են արտադրության պրոցեսում։ Տնտեսական, քաղաքացիական իրավունքի նորմերի օգնությամբ կարգավորում է բոլոր այն արտադրական-տնտեսական հարաբերությունները, որոնք ծագում են ինչպես տվյալ արտադրական ձեռնարկության ներսում, այնպես էլ առանձին արտադրական ձեռնարկությունների միջև, աշխատանքային իրավունքի նորմերի միջոցով կարգավորում է աշխատանքի ընդունելու և աշխատանքից աղատելու, աշխատավարձի, աշխատաժամի և հանգստի, աշխատանքի անվտանգության հետ կապված հարցերը և այլն։ Մի խոսքով, արտադրական ձեռնարկության կյանքում չկա մի բնագավառ, որը ենթարկված չլինի իրավական կարգավորման, որտեղ սահմանված չլինի որոշակի կարգուկանոն։ Կարգուկանոնն է «հենց արտադրության յուրաքանչյուր եղանակի հասարակական կայունացման և հետևաբար նրա հարաբերական աղատագրման ձևը հասարակ պատահականությունից և քմահաճույքից»[10],— գրում է Մարքսը։

Կարգուկանոնը արտադրության յուրաքանչյուր եղանակի գոյաձևն է։ Պետության կողմից սահմանված իրավակարգի և իշխող արտադրաեղանակի միջև գոյություն ունի այնպիսի կապ, փոխհարաբերություն, ինչպիսին գոյություն ունի ձևի և բովանդակության միջև։

Արտադրական հարաբերությունները, իրավունքը, իրավական հարաբերությունները, արտադրության կառավարման օրգանները գոյություն չունեն իրարից անջատ, մեկը մյուսից անկախ, իբրև ինքնուրույն հասարակական երևույթ։ Դրանք օրգանապես կապված են իրար հետ, մեկը պայմանավորված է մյուսով, մեկը մյուսի գոյության նախադրյալն է, պայմանը։ Իրավահարաբերությունները արտադրահարաբերությունների իրավական ձևն են, իսկ արտադրահարաբերությունները՝ դրանց բովանդակությունը։ Հնարավոր է, արդյոք, իրական կյանքում առուծախը՝ որպես տնտեսական հարաբերություն, անջատել առուծախից՝ որպես իրավական հարաբերություն։ Ոչ, հնարավոր չէ։ Այդ բանը կարելի է անել միայն տեսականորեն։ Իրականում դրանք կազմում են մեկ միասնություն։

Ի վերջո, համառոտակի իրավունքի բովանդակության և իրավական կարգավորման առարկայի հարաբերակցության մասին։

Յուրաքանչյուր իրավական ձև, յուրաքանչյուր օրենք իր մեջ արտացոլում է որոշակի հասարակական հարաբերություն։ Բայց այդ բանը կատարվում է ոչ թե ինքնին, այլ մարդու գիտակցության միջոցով։ Արտացոլման պրոցեսում հասարակական հարաբերությունը կորցնում է իր ռեալ գոյաձևը, այսինքն՝ այն գծերը, որով նա տարբերվում է նույն կարգի հարաբերություններից և փոխակերպվում է իդեալականի։ Ինչպես ասում է Մարքսը, «Իդեալականը ոչ այլ ինչ է, քան մարդկային գլխի մեջ փոխադրված և այնտեղ փոխակերպված նյութականը»[11]։

Իրավունքի բովանդակությունը ունի երկու կողմ. օբյեկտիվ, որը «գալիս է» իրական կյանքից և իրենից ներկայացնում է այն ընդհանրությունը, որ ներհատուկ է կարգավորվող հարաբերությունների տվյալ խմբին (տեսակին)

10 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մաս երկրորդ, ե., 1949, էջ 381։
11 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, ե., 1954, էջ 20։

և սուբյեկտիվ (հասկացություն, զաղափար և այլն), որը ավելացնում է մարդը իր կողմից, տալով նրան գաղափարական ձև։

Օրինակ, առօրյա կյանքում քաղաքացիների միջև, քաղաքացիների և պետական հիմնարկների միջև, պետական այս կամ այն հիմնարկության միջև առաջ են գալիս զանազան առուծախի հարաբերություններ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր առարկան, անձերը և այդ հարաբերությունից բխող իրավունքներն ու պարտականությունները։ Սակայն, չնայած իրենց բազմազանությանը, այդ հարաբերությունները ունեն և ընդհանուր ներքին գծեր, հատկություններ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել նրանց զարգացման օրինաչափությունը։

«Առուծախի պայմանագրով,— ասված է ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգրքի 237 հոդվածում»,— վաճառողը պարտավորվում է գույքը հանձնել գնորդին ի սեփականություն, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել գույքը և որոշակի դրամական գումար վճարել դրա համար»։

Ինչպես տեսնում ենք, հոդվածի ձևակերպման ժամանակ օրենսդիրը վերացել է իրերից, առարկաներից և առուծախի պայմանագրի առանձին ձևերից ու տարատեսակներից, որոնց հանդիպում ենք հասարակական կյանքում։ «Գույք» բառի մեջ մարել են զգայաբար ընկալվող առարկաների բոլոր հատկությունները։ Առարկաների միջև եղած տարբերությունների չքացման հետ չքանում են նաև առուծախի իրավասու կողմերի առանձին, կոնկրետ անձերի միջև եղած տարբերությունները։ Մենք արդեն գործ ունենք ոչ թե իրական, որոշակի՝ փաստական հասարակական հարաբերությունների անմիջական կրողների հետ, այլ նրանց իդեալականի, նրանց բոլորի համար միատեսակ երևույթական անձերի, տարբերազուրկ խտացումների հետ։ Եվ իրոք, «գնորդ» և «վաճառող» բառերը ոչ այլ ինչ են, քան «խտացումներ, կրճատումներ, աբստրահումներ», որոնցով մենք ընդգրկում ենք իրականում գոյություն ունեցող բազմաթիվ գնորդներին և վաճառորդներին՝ ըստ նրանց ընդհանուր հատկության։

Այսպես ուրեմն, իրավական ձևի բովանդակության և իրավական կարգավորման առարկայի միջև գոյություն ունի այնպիսի հարաբերակցություն, որպիսին գոյություն ունի ընդհանուրի և առանձինի միջև։ Դրանք և նույնական են և նույնական չեն։ Նույնական են, որովհետև իրավունքը իր մեջ ներառնում է այն ընդհանուրը, որը ներհատուկ է կարգավորվող հասարակական հարաբերություններին, կազմում են այդ վերջինների բովանդակությունը։ Նույնական չեն, որովհետև կարգավորող հասարակական հարաբերությունները բացի ընդհանուր հատկություններից ունեն և մասնավոր, առանձին, անհատական տարբերիչ գծեր։ «Առանձինը,— ինչպես ասում է Լենինը,— գոյություն չունի այլ կերպ, քան այն կապակցությամբ, որը տանում է դեպի ընդհանուրը»[12]։

---

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, ե., 1962, էջ 453։

СООТНОШЕНИЕ ПРЕДМЕТА ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ И СОДЕРЖАНИЯ СОЦИАЛИСТИЧЕСКОГО ПРАВА

А. М. ДАНИЕЛЯН

Резюме

Предмет правового регулирования и его отношение к содержанию права—одна из важных, но малоразработанных проблем теории социалистического права. О предмете правового регулирования написано немало работ, но все же имеется ряд нерешенных вопросов. Под предметом правового регулирования большинство ученых-юристов понимает общественные отношения. Однако какие именно общественные отношения являются предметом правового регулирования—остается спорным. Мы считаем, что под предметом правового регулирования следует понимать лишь те общественные отношения, выражением которых оно само является. Правовое регулирование необходимо предполагает *соответствие и совпадение* содержания права с содержанием регулируемого общественного отношения. Их совпадение является *объективным основанием* правильности применения права. Право выражает то общее, которое присуще регулируемым общественным отношениям. Поэтому между содержанием права и предметом правового регулирования существуют такие взаимоотношения, какие существуют между общим и единичным.